


Զ Ո Ռ



Կազմեց՝ ՆՆՏՆ. Ի. Ի. ՅԵՎԱՏՐՈՊՈՎ,

ՔԻՖԼԻՍ—1929

32
70

8 APR 2013

04 AUG 2014

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՄԲԱԿԻ ԿՈՄԻՏԵ
ԵՆՏԵՆՈՒՊՐԻՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

Ո Ո Չ

632
6-70

այ

== 2 0 0 ==



1007
329X5

Կազմեց՝ ԵՆՏԵՆ. Ի. Ի. ՅԵՎԱՍԻՊՈՎ,



1929 - 1929

ԹԻՖԼԻՍ—1929

Թիֆլիս
Պոլիգրաֆսրեսի 6-րդ սպ.
Կրտսեպվար № 703:
Տիբրաժ 2000, Պատվեր № 1484

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿՈՎԵԼ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՏԻՋԻ (ՉՈՌԻ) ԴԵՄ


Թե ինչ մեծ վնաս է տալիս բամբակենուն «չորը», այդ գիտե-
ամեն մի բամբակագործ, մանավանդ Հայաստանում և Նախիջևա-
նում:

Չորն իմացվում է նրանից, վոր բամբակենու թե տերևները
և թե կնգուղները կարմրում կամ գորշ գույն են ստանում:

Չորից վնասված տերևներն ու կոկոնները թառամում, թափ-
վում են, իսկ կնգուղները, ժամանակից շուտ բացվելով, չնչին բերք
են տալիս:

ԻՆՉԻՑՆ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՅԴ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե բամբակագործն ուշադրությամբ զննի բամբակի կար-
մրած տերևները, նա նրանց ներքևի յերեսի վրա կնկատի մի թե-



թև ու քնքույշ վոստայնի ցանց,
վորը յերբեմն ծածկված է լի-
նում թողով: Ահա այդ ցանցի
տակ ել ապրում են չոր հիվան-
դությունն առաջացնող տիգերը:
Այդ տիգերը լինում են դեղ-
նականաչավուն գույնի, իսկ
յերբեմն՝ ծիրանագույն, նրանք
այնքան մանր են, վոր շատ
սուր աչք ունեցողը միայն կա-
րող է նրանց տեսնել: Նկար Բ. և գ տիգը խիստ մեծաց-
րած:

Ամեն մի բամբակագործ պարտական է իմանալ այդ վնասա-
տույի մասին հետևյալ տեղեկությունները.—

Գարնանը շուտ, հենց վոր որերը տաքանում են, տիգերը դուրս են գալիս իրանց ձմեռելու տեղերից և անցնում են մոլախոտերի վրա: Նրանք ծծում են պտուտակի, վայրի սուղդի, փիփերթի, հափրուկի և ուրիշ մոլախոտերի տերևները հյուսթը ու այսպես ապրում են մինչև վոր դաշտերում այդ խոտերը չորանում են: Հիմա արդեն նրանք կերակուր գտնելու նպատակով անցնում են այն մոլախոտերի վրա, վորոնք բուսած են առուների յեղրներին կամ նըրանց մոտերքում: Այս տեղափոխությունը նրանք անում են կամ իրենք, կամ թե դա կատարվում է քամու միջոցով, վորը քշում է տերևները մի տեղից մյուս տեղ, իսկ դրանց վրա նստած են լինում այդ տիգերը:

Այդ տեղափոխությունը կատարվում է և ուրիշ կերպ:

Բամբակի դաշտերը ջրելիս, տիգերը, վոր նստած են լինում թափած տերևների վրա ջրի հետ միասին քշվում-տարվում են բամբակի ցանքսի վրա: Բացի դրանից, բամբակի ցանքսերի մեջ են քաշվում նաև այն տիգերը, վորոնք ապրում էյին ցանքսերի շուրջ գտնված այն մոլախոտերի վրա, վորոնք գտնվում են ճանապարհների աջ ու ձախ կողմերում, կամ արտը արտից բաժանող միջնակներում:

Տիգերի՝ բամբակենու վրա սիրով տեղափոխվելու պատճառներից մեկն էլ այն է, վոր բամբակենու տերևների տակի յերեսները քնքույշ են և բացի դրանից, նրանց վրա կան բազմաթիվ մագմըզուկներ: Իրանց վրա էլ նրանք ամրանում են և ցած չեն թափվում: Իսկ մագմզուկների վրա նստած խիտ փոշին պաշտպանում է տիգերին քամուց, վատ յեղանակներից և դրանով էլ հեշտացնում է նրանց բազմանալը:


Այսպիսով, ուրեմն, հանապարհների մոտ, միջնակներ ունեցող և շուրջը մոլախոտերով հարուստ բամբակի արևերն ամենից ցուս յեվ ուժեղ կերպով են վարակվում «չոռով»:

Ամենից շուտ առաջացած տիգերը նստում են բամբակենու ստորին մասում և տեղավորվում են տերևների տակի յերեսի վրա: Այստեղ էլ նրանք սկսում են վոստայն հյուսել, հաճախ տերևների ծալքերում (տես նկար № 1)՝ նրա առանձին-առանձին մագմզուկների միջև:

Տիգերը հենց այստեղ էլ՝ տերևի տակի մասում մնում են ու բազմանում: Ամեն մի եզ տիգ ածում է հարյուր և էլ ավելի՝ ձու:

Ձվերը նա ամրացնում է տերևների տակի մասի վրա՝ վոստայնավոր իր թելիկներով: Տիգերի ձվերը՝ համեմատաբար շատ խոշոր են և, շնորհիվ իրենց ունեցած փայլի, սովորական աչքով իսկ յերևում են: Նոր ածած ձվերը, կարծես, կանաչավուն հեղուկի թափանցիկ մանր կաթիլներ լինեն. հետո նրանք պղտորվում են և, թրթուրներ դառնալուց առաջ, «մարգարտի փայլ» են ստանում:

Ձու ածելուց յերեք-չորս որ անց այս ձվերից դուրս են գալիս թրթուրներ, իսկ սրանցից գոյանում են տիգեր: Թրթուրը մինչև




Նկ. 2. Բամբակենու տերևը, վորին տիգը սկսել է վնասել տերևը կուշ յեկած տեղերում, ուր գտնվում են տիգերը, սկսում է չորանալը

չև տիգ դառնալը տևում է մոտ մի շաբաթ, իսկ յերբ շուգ որեր են անում, այս փոխանցումը կատարվում է 4-5 որվա մեջ: Եզ տիգերը ամառն ապրում են 2-3 շաբաթ, իսկ վորձերը՝ յերկու անգամ ավելի:

Մի գույգ (եգ ու վորձ) տիգից ամառվա ընթացքում առաջանում է մոտ 20 սերունդ: Բայց բոլոր տիգերն էլ կենդանի չեն մնում. նրանց մեծ մասը սատկում են աննպաստ յեղանակներից և բնական թշնամիներից:

Այն տարիներում, յերբ տիգերի բնական թշնամիների թիվը շատ է լինում, բամբակենու «չոռն» էլ նվազում է:

Չնայած դրան, տիգը, մանավանդ չոր ու տաք յեղանակներին, շատ արագ է բազմանում և բամբակին ահագին վնաս է տալիս:



Նկ. 3. Այս նկարի վրա ցույց է տված բամբակենու ուրիշ տերև, վորի վրա գորգացել են մեծ թվով տիգեր: Դրա համար էլ տերևի վնասվածքները ավելի մեծ են:

Յեթե հաշվենք, վոր ամառվա ընթացքում առաջացած 20 սերունդից կենդանի մնա միայն մի քառորդը, այդպիսով տիգի մի գույգից ամառվա մեջ գուրս կգան մի քանի միլիարդ տիգեր:

Տիգերը, տեղավորվելով տերևի ծալքերի մեջ, սկսում են միացյալ ույժերով ծծել տերևը, դրանից է, վոր վնասված տեղերում տերևը կարմրում և կամաց-կամաց թառամում է: Տերևի վերին յե-

րեսի վրա առաջանում են գորշ բծեր, իսկ նրա տակի յերեսին՝ վնասված տեղերում՝ առաջանում են մուգ-դեղնագույն բծեր:

Նկար № 2-ի մեջ ցույց է տրված տերևի տիգերից կրած սկզբնական շրջանի վնասները, իսկ նկար № 3-ի վրա ցույց է տրված շատ վնասված տերևը:

Տիգերը, հետզհետե բազմանալով տերևի վրա, վարակում են ամբողջ բույսը՝ ցածից մինչև գլուխ: Տիգերը ծծում են տերևների հյութը, վորից տերևները չորանում և գորշ գույն են ստանում ու դրանից հետո նրանց վրա առաջանում են ծակափններ: Հետո տիգերն սկսում են անցնել տերևների կոթերին, այդտեղից բողբոջներին (կոկոններին) և ապա ծաղկակալներին: Վնասված բողբոջներն ու ծաղիկները դեղնում, թափվում են, դրանից հետո վոչնչանում են սերիկները և ապա թափվում են տերևները: Թուփը բոլորովին մեղկանում է յեվ կանաչ բավակենու տեղ արևում ցցված են մնում գործ գույնի, վոսայնով պատած չոր հյուղերն ու ցողունները:

Հետո տիգերը, կերակուր գտնելու նպատակով, մի թփից անցնում են մյուսը, արտի այս ծայրից այն ծայրը, որ-որի վրա նորանոր տարածություններ վարակելով:

Պետք է նկատենք, վոր սկզբում դաշտի մեջ համատարած ավերում չի նկատվում, վորովհետև տիգերն այդ ժամանակ վնասում են միայն այն բամբակենիները, վորոնք գտնվում են արտի յեղերում: Տիգերը շատ անգամ քամուց և ջրից թափված տերևների հետ շարժվում են հարևան արտերը և տարվում են նույնիսկ բավական հեռու ընկած դաշտեր:

Այսպիսով, ահա, այն տարիներում, յերբ տիգերն ավելի ցածի յեղերում յիջում, «չոռը» բռնում է բամբակի ահագին սարածուքյուններ յեվ կարողանում է վոչնչացնել բամբակագործի գրեթե ամբողջ սարվա աշխատանքը:

Աշնանը, յերբ ցրտերն ընկնում են, տիգերն իրանց թափանցիկ, դեղնա-կանաչավուն գույնը փոխում են և դառնում կարմրադեղնավուն կամ ծիրանագույն: Այդ ժամանակ նրանք, սովորաբար ուտելուց դադարում և թափնվում են թափած տերևների տակ, հողի ճեղքերում, քարերի տակ և այլն: Այստեղ էլ վոստայն են գործում և դրանց մեջ անշարժ վիճակում մնում են մինչև հետևյալ գարուն: Ցրտերը, վորից վնասվում է բամբակենին, չեն ազդում տիգերի վրա: Մոլախոտերի վրա գտնվող տիգերն ապրում են որ-

բանց տերէնքերի վրա և շարունակում են բազմանալ մինչև սառնամանիքներն ընկնելը:

Յերբ մեզ ծանօթ է, թե ինչպես է ապրում և ինչ փաստ է տայիս բամբակենուն տիզը, դժվար չի նրա դեմ պայքարել, նրանից ազատվել: Հարկավոր է միայն յեռանդով կպչել պայքարի գործին, առանց ույժ և ջանք խնայելու:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿՈՎԵՆՔ ՏԻՉԻ ԴԵՄ

Տիզի դեմ պայքարը պետք է սկսել վոչ այն ժամանակ, յերբ նա արդեն մեծ չափով բազմացել է և անմիջապես սպառնում է բամբակենուն, այլ շատ ավելի շուտ, հիշելով, վոր ավելի հեշտ է բամբակենու չոռի առաջն առնել մինչեւ նրա յերեվալը, քան կովել նրա դեմ, յերբ նա արդեն յերեվացել է: Պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, վոր թե տիզը չզարգանա, և թե նրա սերունդը չկարողանա ապրել:

Գիտուն մարդիկ, վորոնք հետևել են թե ինչպես է «չոռը» զարգանում, հաստատել են, վոր չոռի տիզը յերևում է և հեշտությամբ ու շատ տարածվում է բամբակի այն արտերի վրա. վորոնց հողերը հողնած են և վատ մշակված: Այսպես ահա, վորպեսզի հաջողությամբ կովենք տիզի դեմ, պետք է դիմենք հողագործության, այսպես ասած, կուլտուրական յեղանակներին: Հողագործության այդ յեղանակները գործադրելով մենք արդելում ենք տիզերի առաջանսդուն և միևնույն ժամանակ ավելացնում ենք բամբակի բերքը:

Վորոնք են այդ միջոցները:

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Կանոնավոր պահաւերջանի գործադրումը — այսինքն՝ բամբակից հետո հացահատիկ կամ կերի խոտ ցանելը:

Գյուղատնտեսական վործադրաշտերում ապացուցված է, վոր, ինչպես վերև ասացինք, ամեն տարի իրար վրա նույն հողում և արտում բամբակ ցանելը ձեռնտու չէ: Այդ արտերի հողը հողնում է և դրա պատճառով էլ բամբակը լավ չի զարգանում: Այդպիսի բամբակենին հեշտությամբ է հիվանդանում «չոռով» և դրանից էլ, ի հարկե, բամբակի բերքը նվազում, քչանում է:

Պողաշըջանի կարևորությունը հաստատվում է հետևյալ յերեւույթով, վոր նկատվել է Հայաստանում. այն դաշտերում, ուր տարեց-տարի բամբակ են ցանել, բամբակենու բոլոր թփերը «չոռով» վարակված են յեղել և բամբակագործը ամեն մի հեկտարից 280—320 կիլոգրամ (20-30 փուլթ) կորուստ է ունեցել: Այդ արտերը չոռով այդքան մեծ չափերով վարակված են այն պատճառով, վոր տիզերը տարեց-տարի ձմեռել ու բազմացել են հենց այդ արտերում:

Իսկ բամբակի այն արտերում, ուր առաջ ցորեն է յեղել ցանված, տիզեր գրեթե չեն յերեվացել: Դա բացատրվում է նրանով, վոր տիզերը հացաբույսերով չեն կերակրվում, ուստի այդ արտերումն էլ չեն ապրում:

2. Գոմաղիք կամ աղած փուսպը յեվ կամ լոբիացեղ բույսերը, վորպես կանաչ պարարտացում, արտի մեջ վարելը յեվ դրանցով դաւեսերն պարարտացնելը վերադարձնում է հողին նրա բերփասվորչյան ույժը:

Լավ պարարտացրած արտերը չոռով քիչ են վարակվում, վորովհետև բամբակն այդ արտերում աճում է ավելի առողջ, ավելի մեծ թափով է բուսնում և հեշտ էլ բուժում է տիզերի տված վնասները: Բացի այդ, պարարտացումը ավելացնում է բերքը վոչ միայն այն տարում, յերբ արտը պարարտացրել ենք, այլ նաև հետևյալ տարում: Այսպես, ուրեմն, մի անգամ հողը պարարտացնելով, բամբակագործը յերկու տարի իրար հետևից բարձր բերք է ստանում:

3. Ցանելով միայն առողջ յեվ վորձված սերմ, վորք սալիս է առողջ ու ուժեղ թուփ, վորն և դիմադրում է «չոռ»-ին:

4. Ցանալը կասարել շարճացաններով յեվ հող լավ մեակելով: Շարճացանքը ոգնում է բույսի ավելի լավ աճելուն, դրա հետևանքով էլ բամբակենին զանազան վնասատուների դեմ կովելու ավելի դիմացկանություն է տալիս: Յերբ շարճացանք անելով սերմերը հավասար խորության մեջ են գտնվում, — նրանք միասին էլ գուրս են գալիս հողի միջից և բոլոր բույսերը հավասար չափով ոգտվում են թե արեգակի լույսից, թե հավասար սնունդ և ող ստանում: Բացի այդ, շարճացան մեքենաներով ցանած արտերում կարելի յե լինում այլ մեքենաներով հողը փխրացնել և ձիաքարչ գործիքներով քաղհանել մոլախոտերը:

5. Ջրելու կանոնավորումը, — այսինքն կանոնավոր և իր ժամանակին ջրելը, վորից բամբակենին կանոնավոր և հավասար զարգանում է:

Արտը չպետք է բողնել վոր շատ չորանա, բայց ավելորդ ջրելն յետ վնասակար է, ուստի պետք է ջրել չափավոր:

Յեթե բամբակի արտում «չորը» շատ է զարգացած, բամբակագործը բացի հողամշակության այլ միջոցներից, պետք է գործադրի «չորի» դեմ պայտարելու նաեվ նախագրուշական միջոցներ, — այն է՝

1. Անցանից արտերի միջից բույսերի մնացորդների ժողովելն ու այրելը:

Բամբակը չանաքելուց հետո, արտի միջից պետք է ժողովել և դուրս տանել ու այրել բամբակենու բոլոր ցողունները, թափած տերևներն ու կնգուղները: Նույնը պետք է անել այն բոլոր բույսերի վերաբերմամբ, վորոնք վարակված են «չոր»-ով, հատկապես բոստանի բույսերը:

Դա արվում է այն նպատակով, վորպեսզի, այրելով այդ բույսերի մնացորտները, վոչնչացնենք նրանց վրա նսած յեվ ձմեռող սիգերը:

2. Արտի ու աշխանը կամ ձմեռնամուսի վառած խոր վառը, վորից հետո-հողերի վրա մի քանի որով պետք է ջուր կապել:

Դրա հետևանքով ձմեռող սիգերը սառկում են: Բացի այդ, այդ ժամանակ հերկած արտը շատ ջուր է ծծում իր մեջ և այն պահպանում իր խորքերում:

3. Արտ-արտից բաժանող միջնակների վրա բուսած խոտերի ննձելն ու այրելը, վորպեսզի այդ խոտերի վրա ձմեռած սիգերը գարնան չկարողանան զարգանալ:

4. Սեվ ցել մսցնելն այն շրջաններում, վորոնք ուժեղ կերպով վարակված են «չոր»-ի սիգերով: Դրա համար անհրաժեշտ է աշխանը՝ բերքը հավաքելուց հետո, հողը վարել և թույլ չտալ, վոր մինչև գարուն բամբակ ցանելը, նրա վրա մուխոտներ բուսնեն: Տիգերը, այդ արտերի վրա իրենց համար կերակուր չգտնելով, սառկում են:

Գործադրելով հիշած բոլոր միջոցները, բամբակագործն իր դասի վրա ստեղծում է այնպիսի պայմաններ, վորի հետևանքով բամբակենին բսնում ու զարգանում է ուժեղ, առողջ յեվ դիմաց-


կուն-ուրեմն յեվ բույսը կարողանում է հաջողությամբ կովել «չոր»-ի դեմ:

Պետք է առանձնապես շեշտենք, վոր այս միջոցները միայն այն դեպքում են տալիս ցանկացած հետևանք, յերբ նրանք գործադրվում են բամբակի բոլոր արտերի վերաբերմամբ, առանց բացառության. դրանով միայն կարելի յե վերջ տալ բամբակենու այդ վտանգավոր թշնամուն:

Իսկ յեթե բամբակ ցանողներից միայն մի քանիսը կկատարեն հիշած խորհուրդները, իսկ նրանց հարևաններն անուշադիր կլինեն, այդ դեպքում վարակված արտերում գտնվող սիգերը հնարավորութուն կունենան այս կամ այն ճանապարհով փոխադրվել չվարակված արտերն և այստեղ զարգանալով, կվարակեն և այդ արտերը:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ՈՒՐԵՄՆ, ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ „ՉՈՐ“-Ի ԴԵՄ

Փորձերը ցույց են տվել, վոր «չոր»-ով վարակված բամբակենու արտերը կարելի յե բժշկել ծծմբի (սուլֆուրի) փոշիով: Արևի



Նկ. 4. Բամբակենու ձեռքի փուքս փոշոտիչ:


ճառագայթների տարբերյալ հետևանքով՝ ծծմբից բարձրանում է թունավոր մի գազ, վորը վոչնչացնում է «չոր»-ի սիգերին:

Ծծմբի փոշին պետք է լինի շատ մանր, վորովհետև այդպիսի մանր փոշին է, վոր փոռոտելիս կաչում է բամբակենու սերկվներին յեվ նպաստում է, վոր մեծ քանակությամբ ծծմբի գազեր առաջանան:

Ծծմբի փոշոտումը անում են հատուկ մեքենաներով, վորոնց հասարակները ձեռքի պարզ փուքսեր են. սրանք ունեն յերկուական կոթ, մի փոքրիկ թիթեղե արկղիկ, ուր ածում են ծծումբ և թիթեղե խողովակի ծայրին մի ցրիչ: (Տես նկար № 4): Յերբ փուքսը շարժում ենք, ծծումբն անցնելով արկղիկի մեջ գտնված մազի մի-

ջով, հրվում է դեպի թիթեղե խողովակը և այստեղին (ծայրից) դուրս է գալիս փոշանման:

Ձեռքի փուլքերով աշխատանքը կատարվում է դանդաղ և համեմատաբար շատ ծծումբ է գործածվում: Ավելի ձեռնառու չէ



Նկ. 5. Բամբակենու փոշոտիչ «Տիպ-տոպ»:

«ԳՐՅՈՒՆ» և «ՏԻՊ-ՏՈՊ» մարկաների, մեջքին ամրացվող, մեքենաները, մանավանդ «ՆԻԱԳԱՐԱ» մարկայի ամերիկական փոշոտիչը: Դրանց գործածելու յեղանակի մասին կա հատուկ գրքույկ. — «Բամբակենու վասատուների դեմ կռվելու համար գործածվող մեքենաներն ու միջոցները» վերնագրով: Այդ մեքենաներով ու գոր-

ծիքներով աշխատանքներ տանելը շատ հեշտ է և հնարավորութուն է տալիս մեծ տարածութիւններ փոշոտել: Մի հեկտար բամբակենու արտը մի անգամ փոշոտելու համար պահանջվում է 48 կիլոգրամ (դեսյասիկին 3 փուլ) ծծումբ:

Յեթե բամբակենին մատղաշ է և «չոռ»-ով շատ վարակված չէ, այդ դեպքում մի հեկտար փոշոտելու համար գնում է ընդամենը 24 կիլոգրամ (դեսյատինին 1½ փուլ) ծծումբ:

Բամբակենին ծծմբով փոշոտելու ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ կանոններով՝

1. Փոշոտելուց առաջ անհրաժեշտ է բամբակի արտից քաղհանել և ժողովել բոլոր մոլախոտերը: Յեթե այդ արված չէ, այդ դեպքում պետք է ծծմբով փոշոտել նաև մոլախոտերը:

2. Ծծմբով փոշոտելը պետք է կատարել խաղաղ, վոչ քամու յեղանակին, վորպեսզի քամին ու անձրևը չխանգարեն ծծմբի համահավասար նստելուն թփերի ու տերեփների վրա:

3. Աշխատանքները կարելի չէ կատարել ցերեկն ու լուսնյակ գիշերները, բայց ավելի լավ է ծծումբ փչել առավոտը վաղ: Այդ ժամերին ծծումբն ավելի լավ է նստում բամբակենու վրա և յերբ նա տաքանում է, արևի ճառագայտների տակ ծծմբի թունավոր գազերը արագ են գոլորշիանում և ազդում տիգերի վրա, վորից և նրանք սատկում են:

4. Բույսը պետք է փոշոտել ցածից, վորովհետև տիգերը զրտնվում են տերևների տակի կողմին: Յերբ ցանքսը խիտ է արված, պետք է թփերը վեր բարձրացրել և աշխատել, վոր փոշին կպչի տերևներին և չփոշոտված վոչ մի տերև չմնա:

5. Յեթե փոշոտելուց հետո ուժեղ անձրև գա, այդ դեպքում, հենց վոր յեղանակը լավացավ, փոշոտումը պետք է նորից կրկնել:

6. Յեթե նկատվում է, վոր առաջին փոշոտումից հետո տիգը չի սատկել, կամ քամին ու փոշին ուրիշ տեղերից տերևների հետ նոր տիգեր են բերել ու այդտեղ թափել, այդ դեպքում մեկ ու կես, յերկու շաբթից հետո պետք է փոշոտումը կրկնել:


7. «Չոռ»-ի դեմ կռիվը պետք է սկսել իր ժամանակին: Չպետք է սպասել, մինչև վոր տիգերը բազմանան ու վարակեն բամբակի ամբողջ արտը: Դրա համար ել ծծմբով փոշոտելը պետք է սկսել տիգեր յերևալուց անմիջապես հետո և շարունակել մինչև սեպտեմբեր: Նկատած է, վոր ցուրտ գիշերները ընկնելուց և շատ ցոզի

ժամանակ բամբակենու վրա տիգերը սկսում են պակասել, բացի դրանից, այդ ժամանակ տիգերն ավելի քիչ են շարժվում և բամբակենուն քիչ են վնասում: Փոշոտելու ժամանակ փոշոտողը պետք է գնա կամ առաջ, կամ յետ-յետ (շարքացանքսում), բայց պետք է գնա քամու հակառակ՝ յեթե քամի կա, փոշոտած տարածութունը թողնելով իր հետևում: Մեքենայի ռետինի խողովակը պետք է բռնել ձախ ձեռքին՝ մյուս ծայրը ուղղել դեպի աջ՝ բույսի ստորին մասի վրա: Դա արվում է այն նպատակով, վորպեսզի թունավոր փոշին հանդարտ, ցածից վեր բարձրանալիս և հետո յերկար ժամանակ շարժվելով ողի մեջ փոշոտած թփերի վրա, չմանի փոշոտող անձի աչքերի, քթի և բերանի մեջ:

Յեվ այսպես, «չոռ»-ի դեմ կովելու ամենից ազդու միջոցները հետևյալներն են՝



1. Հողամշակութայան կուլտուրական յեղանակները,
2. Նախագգուշական սնեսական միջոցները,
3. Վարակված բամբակենին ծծմբի փոշով փոշոտելը:





« Ազգային գրադարան »
NL0289513

17638



A 71455-100

